Կ'ուզէին զնա քարկոծէին՝
Թէ չէր տըվեալ զրանիք ժամին։
Իսկ ի վաղեան առաւօտին
Վախաց Նիկոլն ի յիւր սրտին.
Փախուստ արար դէմ ի Լովին.
Կորուստ հնարէր իւրոյ ազգին։
Իբրեւ ամիս ու կէս անցին՝
Գրիգորէն բանադրանք բերին.
Եօթըն թիզ էր թուղթն որ տվին.
Շատ նզովք ու անէծք կայր միջին։
Ժողովուրդն երբ զայն լսեցին՝
Պարոնտիրէն հրաժարեցին.
Յեկեղեցեաց ի բաց կացին,
Բանադրանացըն վախեցին։
Գնացեալ յետոյ ասեն նմին,
Թէ, « Եկին քեզ անէծք նզովին.
Գնա օրհնէնքն առ Գրիգորին,
Որ զքեզ ընդունիմք կրկին.
Ապա թէ ոչ՝ չհնազանդիմք,
Առաջնորդի կարգն զքեզ չունիմք »։
Այս էր պատճառն առաջին
Որ սկիզբն եղեւ ամէն չարին։
Իսկ նա ասէր նմա չար յոլով
Եւ դիւահար զնա կոչելով,
Թուրք թլփատած անուանելով,
Ազգի ազգի հայհոյելով.
« Ես առաջնորդ եմ էմրէրով
Եւ տեղացի, Լեհցի գոլով.
Մելքիսեդեկն եղ զիս ի Լով,
Եւ ես մեծ եմ քան զնա յոլով »։
Զբանադրանք նորա չընէց.
Զթուղթն ի յանարգ տեղի ձգեց.
Յեկեղեցին համարձակեց.
Առջեւ խորանին աղօթեց։
Քահանայք երբ զայն լսեցին՝
Ժողովրդովք դուրս վազեցին.
Բնաւ այլ ժամըն չըմըտին,
Եւ ոչ զայն համբուրեցին.

Ժամըն մընաց դատարկ ունայն,
Եպիսկոպոսն երդէր միայն.
Եւ իւր օրհնած արեղաքն այն
Ամէն մէկ տեղ մի փախեան։
Նիկոլըն մնաց շիւարած.
Մէկ մարդ մի իւր մօտըն չի գնաց.
Ցամէն դիաց տարակուսած,
Մէկ մի իւր հետըն չիխօսաց։
Ապա մարդն յաղանին [1] յըղեաց
Ճամբու խարճլըխնացմէ խնդրեաց.
Երթամ մօտ վարդապետն, ասաց,
Մեղայ ասեմ, ընկնիմ յոտաց։
Աղաք և ժողովուրդ խնդաց.
Տըվին դրամ ըստ իւր կամաց.
Իսկ նա մինչեւ Պուռսա գընաց.
Տէր Գրիգորին ոչ հնազանդեաց։
Եւ անդ յոլով չարիս գործեաց,
Եւ ի ճանապարհըն մեղանչեաց.
Եւ զինչ ունէր զամէնըն վատնեաց,
Բազում պարտեօք ի Լոմն եկաց։
Սուտ խաբերայ թըղթեր գրեաց
Թէ Գրիգորէն բերի, ասաց.
Եւ ժողովուրդն նմա չաւտաց.
Գիտէին որ չէր ողորդասաց։
Ասեն. « Ատեն մի համբերեմք,
Սորա չարեացըն մենք լըռեմք.
Ապա թէ ընդ նա յիրար ընկնիմք՝
Շատ մեծ աղմուկ մեք անկանիմք »։
Սկսան գնալ յեկեղեցին
Փառաւորել զՀայր և զՈրդին,
Խաղաղարար զՀոգին հայցեն.
Զի խռովութեան յոյժ պէզրած
[են [2]։
Այլ յետ բազում ժամանակին
Ի Գրիգորէն թղթեր բերին,
Կրկին անիծած Նիկոլին,
Որ չի գնաց նա Կեսարին.

1. Թուրք. Պարոնայք ժողովրդեան։ — 2. Թրք. ճանձրացեալ։